Նախագիծ
Երկրորդ ընթերցում
Լրամշակված տարբերակ

Կ-084[6]-02.04.2019-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» 2004 թվականի փետրվարի 18-ի ՀՕ-41-Ն օրենքի 88-րդ հոդվածում՝

1) 2-րդ և 2.1-ին մասերում «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն» բառերը համապատասխան հոլովաձևերով փոխարինել «Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն» բառերով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-ին մաս.

«4.1. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված հարկադիր կատարման վերաբերյալ գրությունը և օրենքով նախատեսված այլ փաստաթղթերը կարող են Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն ուղարկվել և Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունից փաստաթղթերը կարող են ստացվել էլեկտրոնային եղանակով, որի կարգը սահմանում է Կառավարությունը:».

3) 6-րդ մասից հանել «և կնիքով (առկայության դեպքում) հաստատում» բառերը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետի, որն ուժի մեջ է մտնում սույն օրենքի պաշտոնական հրապարակման պահից վեց ամիս հետո:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» 2004 թվականի փետրվարի 18-ի ՀՕ-41-Ն օրենքի 88-րդ հոդվածում՝

1) 2-րդ և 2.1-ին մասերում «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն» բառերը համապատասխան հոլովաձևերով փոխարինել «Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն» բառերով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-ին մաս.

«4.1. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված հարկադիր կատարման վերաբերյալ գրությունը և օրենքով նախատեսված այլ փաստաթղթերը կարող են Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն ուղարկվել և Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունից փաստաթղթերը կարող են ստացվել էլեկտրոնային եղանակով, որի կարգը սահմանում է Կառավարությունը:».

3) 6-րդ մասից հանել «և կնիքով (առկայության դեպքում) հաստատում» բառերը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետի, որն ուժի մեջ է մտնում սույն օրենքի պաշտոնական հրապարակման պահից վեց ամիս հետո:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ» ՕՐԵՆՔԻ (Կ-084-02.04.2019,31.05.2019-ՊԻ-011/1) ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

Հ/Հ	ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՆԱԽԱԳԾԻ ԱՅՆ ՄԱՍԸ, ՈՐԻՆ ՎԵՐԱԲԵ ՐՈՒՄ Է ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՂԻՆԱԿԻ/ ՀԻՄՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՑՈՂԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈ ՒՆԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ
1	ՀՀ կառավարություն	«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 8-րդ հոդվածի 1-ին կետ	Առաջարկվում է օրենքի նախագծի 8-րդ հոդվածի 1-ին կետով լրացվող՝ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 7-րդ կետերը հանել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրենքի նախագծի 4-րդ հոդվածով փոփոխվող՝ օրենքի 18-րդ հոդվածի 12-րդ մասով արդեն իսկ կարգավորված են այդ հարաբերությունները:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2	ՀՀ կառավարություն	«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 12-րդ հոդվածով փոփոխվող՝ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մաս	Հստակեցման նպատակով առաջարկվում է օրենքի նախագծի 12-րդ հոդվածով փոփոխվող օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասը «պարզաբանում» բառից հետո լրացնել «սույն օրենքի 40-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:

3	ՀՀ կառավարություն	«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 16-րդ հոդվածի 3-րդ կետով փոփոխվող՝ օրենքի 37-րդ հոդվածի 10-րդ կետի 2-րդ պարբերություն	Առաջարկվում է օրենքի նախագծի 16-րդ հոդվածի 3-րդ կետով փոփոխվող՝ օրենքի 37-րդ հոդվածի 10-րդ կետի 2-րդ պարբերությունում «հայցը» բառը փոխարինել »հայցադիմումը» բառով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
4	ՀՀ կառավարություն	«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված	«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածը «ուժի մեջ է մտնում» բառերից հետո լրացնել «սույն օրենքի պաշտոնական հրապարակման պահից» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է: